Հավելված N 1
ՀՀ կառավարության 2018 թվականի
դեկտեմբերի 13-ի N 1444 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 111-րդ հոդվածի 4-րդ մասի և «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կազմակերպություններում, անկախ կազմակերպական-իրավական ձևից (այսուհետ՝ կազմակերպություն), առանց ծնողական խնամքի մնացած երեխաների (այսուհետ՝ երեխա) աջակցության անհատական սոցիալական ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) կազմման հետ կապված հարաբերությունները:

2. Ծրագիրը կազմում են կազմակերպության (անկախ կազմակերպաիրավական ձևից) մասնագետները (մանկավարժը, հոգեբանը, սոցիալական աշխատողը, բժիշկը, իրավաբանը)՝ երեխաների իրավունքների պաշտպանության, նրանց սոցիալ-հոգեբանական վերականգնմանն ու զարգացմանն աջակցելու նպատակով:

3. Ծրագրի պատասխանատուն սոցիալական աշխատողն է: Ծրագիրը կազմելիս կարող են հրավիրվել նաև համապատասխան այլ մասնագիտական կազմակերպություններից կամ անկախ մասնագիտական գործունեություն իրականացնող մասնագետներ:

4. Ծնողներ (միակ ծնող) կամ օրինական ներկայացուցիչ ունեցող երեխայի ծրագիրը կազմելիս հաշվի է առնվում նրանց, ինչպես նաև երեխայի կարծիքը՝ տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, եթե այն բխում է երեխայի լավագույն շահից (բացասաբար չի ազդում վերականգնման գործընթացի վրա կամ չի խոչընդոտում դրա արդյունավետ իրականացմանը):

5. Ծրագիրը կազմվում է թղթային և էլեկտրոնային տարբերակներով, թղթային տարբերակը պահպանվում է կազմակերպությունում:

II. ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

6. Ծրագիրը կազմվում է երեխայի կազմակերպություն ընդունվելու օրվան հաջորդող յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

7. Մինչև ծրագիրը կազմելը կազմակերպության մասնագետները գնահատում են երեխայի կարիքները, որի ընթացքում պարտադիր դիտարկվում է երեխայի՝

1) հուզակամային վիճակը, զարգացման մակարդակի համապատասխանությունը երեխայի տարիքին և սեռին.

2) ֆիզիոլոգիական վիճակը կամ դրա առանձնահատկությունները.

3) ուսման, հաղորդակցման, սոցիալական կապերի ձևավորման ունակությունները.

4) կրթության մակարդակի համապատասխանությունը տարիքին, կրթություն ստանալու ցանկությունը, կրթություն ստանալու հնարավորությունները (ֆիզիկական և տնտեսական մատչելիություն), մասնագիտական կողմնորոշումը.

5) առողջական վիճակը:

8. Ծրագիրը կարող է փոփոխության ենթարկվել՝ շարունակաբար իրականացվող սոցիալական կարիքների ընթացիկ գնահատման արդյունքների (սոցիալական կարիքների նվազում, փոփոխություններ, խորացում) հիման վրա:

9. Ծրագրի շրջանակում իրականացվող միջոցառումները (ծառայությունները) մշակվում են սույն կարգի 7-րդ կետում նշված՝ երեխայի գնահատված սոցիալական կարիքների հիման վրա և կարող են ընտրվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 1112-Ն որոշման N 1 հավելվածի IV-VII բաժիններով սահմանված սոցիալական ծառայությունների ցանկից:

10. Ծրագիրը ներառում է՝

1) երեխայի տվյալները՝ ազգանունը, անունը, հայրանունը, անձնագրի կամ ծննդյան վկայականի համարը, տալու ամսաթիվը, փաստացի բնակության վայրը (հեռախոսահամարը).

2) երեխայի գնահատված սոցիալական կարիքները.

3) իրականացվող միջոցառումների ժամկետները և ակնկալվող արդյունքները.

4) ծրագրի իրականացման ընթացքում սոցիալական կարիքների և դրան համարժեք ծրագրով իրականացվող միջոցառումների ընթացիկ գնահատման արդյունքները (նվազում, փոփոխություններ, խորացում).

5) ծրագիրը մշակող մասնագետների տվյալները (կազմակերպությունը, անունը, ազգանունը, կոնտակտային տվյալները).

6) ծրագրի փակման նկարագրությունը, արդյունքները և հիմքը.

7) ըստ անհրաժեշտության՝ այլ տվյալներ:

11. Երեխայի սոցիալական կարիքների ընթացիկ գնահատում իրականացվում է ամսական պարբերականությամբ և ըստ անհրաժեշտության:

12. Ծրագրում ամրագրված տվյալները, այդ թվում՝ ծրագրի իրականացման ընթացքում առաջացած փոփոխությունները, ներառվում են համապատասխան տեղեկատվական ենթահամակարգում, այդ տվյալների ձեռքբերման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

13. Ծրագրի պատասխանատու սոցիալական աշխատողը մասնակցում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշմամբ սահմանված կարգով տվյալ երեխայի (ընտանիքի) համար իրականացվող սոցիալական դեպքի վարման աշխատանքներին՝ որպես աջակցող ցանցի մասնակից:

14. Ծրագիրը սույն կարգի 13-րդ կետով նախատեսված սոցիալական դեպքի վարման գործընթացում անհատական սոցիալական ծրագրում ներառված միջոցառումների գործընթաց է:

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

15. Ծրագրի իրականացման արդյունքները գնահատում են կազմակերպության մասնագետները՝ յուրաքանչյուրն իր մասով, ինչպես նաև սույն կարգի 13-րդ կետով նախատեսված սոցիալական դեպք վարողը:

16. Ծրագրի իրականացման արդյունքները գնահատվում են քանակական և որակական ցուցանիշներով՝ հաշվի առնելով նաև երեխայի կարծիքը՝ տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, և նրա ծնողների (միակ ծնողի) կամ օրինական ներկայացուցիչների գնահատականները:

17. Անհատական ծրագրի քանակական ցուցանիշներն են՝

1) հանդիպումների և քննարկումների թիվը, դրանց պարբերականությունը.

2) տրամադրվող ծառայությունների թիվը և դրանց տրամադրման ժամկետները.

3) գործընթացի հետ կապված այլ քանակական ցուցանիշներ՝ որպես սոցիալական պաշտպանության (բնակչությանը սոցիալական ծառայություններ տրամադրելու) ոլորտում իրականացվող ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համակարգի բաղկացուցիչ մաս:

18. Անհատական ծրագրի որակական ցուցանիշներն են՝

1) երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնումը.

2) երեխայի վիճակի փոփոխությունը, բարելավումը.

3) երեխայի՝ հասարակության մեջ ներառումը:

19. Ծրագրի իրականացման արդյունքները գնահատվում է ըստ անհրաժեշտության, իսկ յուրաքանչյուր եռամսյակը մեկ՝ պարտադիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2018 թվականի
դեկտեմբերի 13-ի N 1444 - Ն որոշման

Ձ Ե Վ Ա Թ ՈՒ Ղ Թ

ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՋՄՄԱՆ

Երեխայի հաշվառման համարը _____
Հաշվառման ամսաթիվը _____

1. Երեխայի ազգանունը, անունը, հայրանունը _____

2. Ծննդյան ժամանակը _____

3. Երեխայի անձնագրի կամ ծննդյան վկայանի համարը, տալու ամսաթիվը
_____
_____

4. Երեխայի փաստացի բնակության վայրը (հեռախոսահամարը)
_____
_____

5. Երեխայի նախասիրությունները և հմտությունները
_____
_____

6. Երեխայի զարգացման տարիքը _____
_____
_____

7. Երեխայի կարիքները՝
1) սոցիալական _____
_____
_____
_____

2) հոգեբանական _____
_____
_____
_____

3) բժշկական _____
_____
_____
_____
_____

4) կրթական _____
_____
_____
_____

8. Լրացուցիչ տվյալներ _____
_____

9. Երեխայի վերականգնմանը և զարգացմանն ուղղված միջոցառումներ՝

1) սոցիալական վերականգնմանը և զարգացմանն ուղղված միջոցառումներ

Վերականգնողական միջոցառումը և ծառայությունների տեսակները	Կատարողը	Ժամկետները	Ակնկալվող արդյունքը

Հանդիպման ամսաթիվը_____
Մասնակիցները_____
_____

2) հոգեբանական վերականգնմանը և զարգացմանն ուղղված միջոցառումներ

Վերականգնողական միջոցառումը և ծառայությունների տեսակները	Կատարողը	Ժամկետները	Ակնկալվող արդյունքը

Հանդիպման ամսաթիվը_____
Մասնակիցները_____
_____

3) առողջության վերականգնմանն ուղղված միջոցառումներ

Վերականգնողական միջոցառումը և ծառայությունների տեսակները	Կատարողը	Ժամկետները	Ակնկալվող արդյունքը

Հանդիպման ամսաթիվը_____
Մասնակիցները_____
_____

4) կրթադաստիարակչական գործընթաց (կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար կազմակերպվում է անհատական ուսումնական պլանի համաձայն)

Միջոցառումը և ծառայությունների տեսակները	Կատարողը	Ժամկետները	Ակնկալվող արդյունքը

Հանդիպման ամսաթիվը_____
Մասնակիցները_____
_____
Փաստաթղթի փակման ամսաթիվը_____

Ամփոփիչ նշումներ_____
_____

Ծրագրի պատասխանատուի պաշտոնը, անունը, ազգանունը
_____

Ստորագրությունը _____
Լրացնելու ամսաթիվը _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ